

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՄԱՐԻԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՅՆԵՐՈՒՄ

Հողվածում վերլուծված են զանգվածային լրատվության միջոցներում հեղինակային իրավունքի պաշտպանության խնդիրները: Թեև 2014 թվականին ընդունվել է «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որը առաջին անգամ հստակորեն սահմանեց լրատվական նյութի օգտագործման պայմանները, սակայն դեռևս առկա են մի շարք խնդիրներ լրատվական նյութի ազատ օգտագործման պայմանների և նպատակն արդարացնող ծավալի որոշման հետ կապված: Այդիսկ պատճառով հողվածում վերլուծվել են ստեղծագործության ազատ օգտագործման պայմանները, ներկայացվել են ստեղծագործության նպատակն արդարացնող ծավալով օգտագործման վերաբերյալ տարբեր մոտեցումները և միջազգային փորձը: Որպես լուծում առաջարկվել են այն չափորոշիչները, որոնց պահպանման դեպքում միայն ստեղծագործության վերարտադրումը կարող է համարվել նպատակն արդարացնող ծավալով իրականացված:

Հիմնարար բառեր- հեղինակային իրավունք, զանգվածային լրատվության միջոցներ, ազատ օգտագործում, նպատակն արդարացնող ծավալ:

Համացանցի և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը էականորեն դյուրինացրել են ընթերցողների կողմից լրատվական նյութ ստանալու գործընթացը: Ներկայումս առանց տարածքային և ժամանակային սահմանափակման կարելի է ծանոթանալ գրեթե ցանկացած լրատվական նյութի: Տեխնոլոգիական առաջընթացը հանգեցրել է նրան, որ գրեթե բոլոր տպագիր լրատվամիջոցները ունեն իրենց կայքերը, ինչը նշանակալիորեն ընդարձակում է ընթերցողների քանակը և լրատվական նյութը առավել տարածելու հնարավորություն է ընձեռնում: Սակայն, ստեղծված վիճակը ոչ միայն առավելություններ է ապահովում լրատվամիջոցի համար, այլ նաև առաջ է բերում մի շարք մարտահրավերներ: Բազմաթիվ լրատվական կայքերի առկայությունը հնարավորություն է տալիս ազատորեն վերարտադրել սկզբնաղբյուր հանդիսացող թերթերի տեղեկատվական, նույնիսկ վերլուծական հոդվածները տարբեր կայքերում: Ընդ որում, հոդվածները շատ հաճախ վերարտադրվում են ամբողջությամբ, այլ ոչ թե նպատակը արդարացնող ծավալով: Այս խնդիրը առկա է նաև լրատվական կայքերի համար, քանի որ շատ հաճախ ամբողջությամբ վերարտադրվում են ոչ միայն թերթերի, այլ նաև սկզբնաղբյուր կայքերի տեղեկատվական, վերլուծական հոդվածները: Այս պարագայում ըն-

թերցողին ամբողջ լրատվական դաշտում առկա տեղեկատվությանը ծանոթանալու համար բավարար է այցելել միայն մեկ կայք, ինչի հետևանքով աճում են միայն որոշակի կայքերի այցելությունների քանակը: Ստեղծված իրավիճակում մեծ վնաս է հասցվում հոդվածների սկզբնաղբյուրներին, քանի որ նրանց կողմից հրապարակված հոդվածները կորցնում են իրենց էքսկլուզիվությունը, էականորեն կրճատվում են թերթերի տպաքանակը, կայքերի այցելությունների քանակը: Հարկ է նշել, որ այս խնդիրը արդիական է ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ամբողջ աշխարհում: «Fair Syndication Consortium» կազմակերպության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մեկ ամսվա ընթացքում մոտավորապես 75 հազար կայքեր տեղադրում են ուրիշների լրատվական նյութերը, ընդ որում մոտ 120 հազար հոդվածներ փոխառվում են գրեթե ամբողջությամբ¹:

Խոսելով լրատվական նյութերից վերարտադրման իրավաչափության մասին՝ անհրաժեշտ է անդրադառնալ հեղինակային իրավունքի օբյեկտ չհանդիսացող լրատվական նյութին, ինչպես նաև հեղինակային իրավունքով պաշտպանող լրատվական նյութի ազատ օգտագործման դեպքերին:

«Գրական և գեղարվեստական երկերի պաշտպանության մասին» Բեռնի կոնվենցիայի

www.journal.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

(այսուհետ՝ Բեռնի կոնվենցիա) 2-րդ հոդվածը սահմանում է, որ կոնվենցիայով նախատեսված պահպանությունը չի տարածվում օրվա նորությունների կամ զանազան իրադարձությունների մասին լրատվական տեղեկատվության բնույթ կրող հաղորդումների վրա: Կոնվենցիայի այս դրույթը իր ամրագրումն է ստացել նաև մեր օրենսդրությամբ. այսպես. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է, որ հեղինակային իրավունքի օբյեկտ չեն օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների և փաստերի մասին տեղեկատվությունը: Միևնույն ժամանակ օրենքը սահմանում է, որ օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների և փաստերի մասին տեղեկատվությունը հանդիսանում է հեղինակային իրավունքի օբյեկտ, եթե օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների և փաստերի արտահայտման ձևը ստեղծագործական աշխատանքի արդյունք է:

Օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների և փաստերի մասին տեղեկատվության հեղինակային իրավունքի օբյեկտ չհամարելը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս կամ այն փաստի վերաբերյալ անկողմնակալ տեղեկատվությունը հանդիսանում է այդ փաստի ճշգրիտ արտացոլումը և ստեղծագործական բնույթ չի կրում: Այդպիսի բնույթ են կրում պաշտոնական լրահոսը, հանցագործությունների մասին տեղեկատվության տրամադրումը, հեռուստահաղորդումների ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը և այլն: Օրվա նորությունների կամ իրադարձությունների և փաստերի մասին տեղեկատվության դեպքում առաջին պլան է մղվում տեղեկատվության հավաստիությունը և օպերատիվությունը, ուստի, որպես կանոն, տեղեկատվությունը մատուցվում է շատ սեղմ վիճակում, ինչի արդյունքում չի արտահայտվում հեղինակի անհատականությունը: Հենց այս պատճառով էլ վերոգրյալ տեղեկատվությունը զրկված է լինում ստեղծագործական բնույթից և չի համարվում հեղինակային իրավունքի օբյեկտ:

Օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների և փաստերի մասին տեղեկատվությունը հեղինակային իրավունքի օբյեկտ չի համարվում ոչ միայն ՀՀ-ում, այլ նաև բոլոր այն երկրներում, որոնք ստորագրել են Բեռնի կոնվենցիան: Իրադարձությունների և փաստերի մասին տեղեկատվությունը, չնայած որոշակի բացառություններ

րին, հեղինակային իրավունքի օբյեկտ չի համարվում նաև ԱՄՆ-ում: ԱՄՆ-ում իրավական պաշտպանություն են ստանում ստեղծագործության այն տարրերը, որոնք ունեն գոնե նվազագույն ստեղծագործական հատկանիշ: Ու թեև ԱՄՆ-ի Գերագույն դատարանը շատ քիչ պահանջներ է ներկայացնում ստեղծագործական հատկանիշին՝ որպես իրավական պաշտպանության պայմանի, բայց իրավական պաշտպանությամբ օժտված չեն ստեղծագործության այն հատվածները (առանձին բառեր, անվանումներ, բառակապակցություններ), որոնց ստեղծագործական բնույթը այնքան չնչին է, որ չի համապատասխանում իրավական պաշտպանության նվազագույն պայմաններին (de minimis), այսինքն՝ եթե դրանում բացակայում է ինքնատիպությունը (lack of originality)²:

Պաշտպանվում են ոչ թե գաղափարները կամ փաստերը, այլ միայն դրանց արտահայտման միջոցները (expression): Միևնույն ժամանակ ԱՄՆ-ում լայն տարածում ստացած կլանման տեսության (merger doctrine) համաձայն՝ դատարանը կարող է իրավական պաշտպանություն չտալ գաղափարների և փաստերի արտահայտման ակնհայտ ստեղծագործական եղանակին, եթե այն չի կարելի տարանջատել գաղափարներից և փաստերից: Սրանից կատարվում է հետևություն, որ որոշ վերնագրեր, հոդվածներից հատվածներ չեն ստանում իրավական պաշտպանություն իրենց սեղմ և միայն փաստացի բնույթի պատճառով (մասնավորապես գործում է կլանման տեսությունը): Սակայն դատական պրակտիկայում նկատվում են նաև որոշ բացառություններ: Այսպես, Nihon Keizai Shimbun v. Comline Business Date Inc (1998)³ գործով դատարանը թեև նշել է, թե միայն փաստերը իրավական պաշտպանություն չեն ստանում, սակայն կարող է իրավական պաշտպանություն տրամադրվել փաստերի ամբողջությանը, եթե ինքնատիպ է դրանց ընտրությունը, ներկայացումը, դասավորությունը: Փաստերի նկարագրության մեջ ինքնատիպությունը կարող է դրսևորվել բառերի ընտրության, նյութերի կառուցվածքի մեջ: Ուստի ընդհանուր կանոնից կարելի է իրականացնել որոշակի բացառություններ:

Հեղինակային իրավունքով պահպանվող լրատվական նյութի իրավական վերարտադրության իրավաչափությունը ուղղակիորեն կապված է լրատվական նյութի ազատ օգտագործման հետ, այսինքն՝ առանց հեղինակի համաձայնության և հեղինակային վարձատրության վճարման լրատ-

վական նյութի օգտագործման հետ: Հարկ է նշել, որ լրատվական միջոցի ազատ օգտագործման և վերարտադրության իրավաչափության պայմանների հետ գոյություն ունեն տարբեր մոտեցումներ:

ԵՄ երկրների առանձնահատկությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնք սահմանափակում են պաշտպանվող ստեղծագործության ազատ օգտագործման հնարավորությունը: Դրանց թվին է դասվում 2001/29/ԵՄ դիրեկտիվը: Դիրեկտիվի 2-րդ հոդվածը իրավունք է վերապահում բացառիկ իրավունքների սուբյեկտներին թույլատրել կամ արգելել իրենց աշխատանքների ուղղակի կամ անուղղակի, մշտական կամ ժամանակավոր վերարտադրությունը ցանկացած միջոցներով կամ ձևով: Ընդ որում, մասն իրավունքները վերաբերում են ինչպես ամբողջ աշխատանքին, այնպես էլ դրա առանձին մասերին: Դա ենթադրում է այնպիսի իրավիճակ, երբ ստեղծագործության նույնիսկ շատ չնչին քանակի վերարտադրությունը առանց հեղինակի համաձայնության արգելվում է: Այսինքն՝ ԵՄ երկրների մեծ մասում բավական սահմանափակ են ստեղծագործության, այդ թվում՝ հեղինակային իրավունքի օբյեկտ համարվող լրատվական նյութի ազատ օգտագործման հնարավորությունը: Բավական հետաքրքրական են նաև ազատ օգտագործման վերաբերյալ վերջին օրենսդրական զարգացումները: 2013 թվականին Գերմանիայի Բունդերսատի կողմից ընդունվել է գերմանական թերթերի և ամսագրերի հրատարակիչների մտավոր սեփականության պաշտպանության մասին օրենքի նախագիծը, որը ստացել է «Google lex» անվանումը: Այն պարտավորեցնում է լրատվական ազդեցատորներին⁴ և նույնիսկ որոնողական համակարգերին, այնպիսիք, ինչպիսիք են, օրինակ, «Google»-ը, «Bing»-ը, վճարել ամսագրերի և թերթերի հրատարակիչներին՝ դրանց նյութերից նույնիսկ կարճ քաղվածքներ տարածելու համար: Օրենքը առանց լիցենզիոն վճարի թույլատրում է օգտագործել միայն առանձին բառեր և շատ չնչին քաղվածքներ, սակայն, որպես այդպիսին, կոնկրետ քանակ չի նշվում⁵: Նմանատիպ կարգավորում է նախատեսվել նաև Իսպանիայում վերջին օրենսդրական նախագծով, որը ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարից: Իսպանիայում նույնպես ընդունվել է օրենք, որը պարտավորեցնում է լրատվական ազդեցատորներին և որոնողական համակարգերին վճարել լրատվական կայքերին գումար՝ այդ կայքերի բովանդակության մեջ ընդգրկվող ցանկացած հղման համար:

Նշված գումարը արդեն իսկ կոչվել է «Գուգլ հարկ» (Google tax): Որպես օրենքների ընդունման հիմնավորում նշվում է այն հանգամանքը, որ «Google», «Google news» և այլ մնանատիպ համակարգերը «գողանում» են հրատարակիչների աշխատանքը, իրականացնում են հեղինակային իրավունքների խախտումներ: Հարկ է նշել, որ այս նախագծերը, եթե լրատվական ազդեցատորների դեպքում կարող են նույնիսկ արդարացված համարվել, ապա դրանցում նշված մոտեցումները որոնողական համակարգերի պարագայում մեր կարծիքով այդքան էլ ընդունելի չեն: Ճիշտ է, որոնողական համակարգերը ինդեքսավորում են մեդիա կոնտենտը և դրանից եկամուտ ստանում⁶, սակայն բավական մեծ օգուտ քաղում են որոնողական համակարգերի գործունեությունից հենց իրենք՝ լրատվամիջոցները, քանի որ որոնողական համակարգերը այցելուներին ուղղորդում են սկզբնաղբյուր կայքերը, մեծացնում են այցելությունների քանակը: Դրա մասին է վկայում նաև պրակտիկան: Գերմանիայում օրենքի ընդունումից հետո «Գուգլ»-ը ուղղակի հրաժարվեց ինդեքսավորել գերմանական լրատվական միջոցների կոնտենտը, որին անմիջականորեն հետևեց լրատվական կայքերի այցելությունների քանակի կտրուկ անկումը: Դրանից հետո հրատարակիչները իրենք խնդրեցին ինդեքսավորել իրենց կոնտենտը՝ հրաժարվելով «Գուգլ հարկից»: Այս առումով բավական ճիշտ է այն դիտարկումը, որ գերմանական օրենսդրությամբ նախատեսված կարգավորումը նույնն է, թե տաքսու վարորդը պարտավորված լինի վճարել ռեստորանին նրա համար, որ հաճախորդներ է տանում այնտեղ⁷: Ուստի կարծում ենք, որ որոնողական համակարգերի համար մնանատիպ հարկերի սահմանումը անխուսափելիորեն պետք է առաջացնի նույն հետևանքները, ինչ առաջացան Գերմանիայում:

ԱՄՆ-ում մեծ նշանակություն ունի բարեխիղճ օգտագործման (fair use) դոկտրինը: Այս դոկտրինը հնարավորություն է տալիս տարբեր բնագավառներում ստեղծագործական խնդիրներով զբաղվող անձանց հեշտությամբ օգտագործել այլ անձանց ստեղծագործությունները առանց պատասխանատվության ենթարկվելու վախի, իհարկե, մի շարք պայմանների պահպանմամբ: Չնայած այն հանգամանքին, որ երբեմն պաշտպանության են ենթակա նույնիսկ վերնագրերը և լրատվական նյութի շատ փոքր հատվածները, շատ դեպքերում դրանք կարող են ազատորեն օգտագործվել

www.journal.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

առանց հեղինակային իրավունքների խախտման: Օգտագործողի բարեխղճությունը որոշելու համար հաշվի են առնվում հետևյալ գործոնները.

1. Օգտագործման նպատակը և բնույթը, ներառյալ այն հարցը, թե արդյոք նշված օգտագործումը ունի առևտրային բնույթ, թե կրթական բնույթ,

2. Հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործության բնույթը,

3. Ամբողջ ստեղծագործության հետ համեմատության մեջ օգտագործվող մասի ծավալը և կարևորությունը,

4. Հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործության արժեքի կամ հնարավոր շուկայի վրա օգտագործման ազդեցությունը⁸:

Մի շարք երկրներում(Կանադա, Մեծ Բրիտանիա, Հարավային Աֆրիկա, Ավստրալիա և այլն) թույլատրվում է իրականացնել լրատվական նյութերի վերարտադրություն՝ պահպանելով «Fair dealing»-ի կանոնները: Այսպես, Կանադայում վերարտադրման իրավաչափությունը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ պայմանները.

1. Վերարտադրման նպատակը
2. Վերարտադրման բնույթը
3. Վերարտադրման ծավալը
4. Վերարտադրման նյութի երկրնտրանքը
5. Նյութի բնույթը
6. Վերարտադրված նյութի՝ շուկայի վրա ազդեցությունը⁹:

Հայաստանի Հանրապետությունում ևս լրատվական գործունեություն իրականացնողների հեղինակային իրավունքների պաշտպանությունը ձեռք է բերել կարևոր նշանակություն: Հատկապես վերջին տարիներին լայն տարածում են գտել այն դեպքերը, երբ մեկ այլ լրատվամիջոցի կողմից ամբողջական կամ մասնակիորեն վերարտադրվում են սկզբնաղբյուր լրատվամիջոցի նյութերը՝ առանց պատշաճ հղման և նպատակն արդարացնող ծավալի: Առկա խնդիրների կարգավորման նպատակով 2013 թվականի նոյեմբերի 9-ին ընդունվեց «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք), որը առաջին անգամ հստակորեն սահմանեց լրատվական նյութի ազատ օգտագործման պայմանները: Այսպես, օրենքով սահմանվեց.

«1. Տպագիր լրատվական միջոցների, էլեկտրոնային կայքերի (ցանցային լրատվության միջոց)

լրատվական նյութերից քաղվածքների վերարտադրումը այլ տպագիր լրատվական միջոցներում, ինտերնետային կայքերում թույլատրվում է իրականացնել միայն մեջբերման նպատակն արդարացնող ծավալով՝ առանց հեղինակի (հեղինակային իրավունքի իրավատիրոջ) համաձայնության և վարձատրության վճարման: Անկախ վերարտադրման ծավալից՝ լրատվական նյութերից քաղվածքների վերարտադրումը չպետք է բացահայտի լրատվական նյութի էական մասը: Վերարտադրումը պետք է բացառի լրատվական նյութի սկզբնաղբյուրի հնարավոր ընթերցողների քանակի և լրատվական նյութի օգտագործման ծավալների վրա բացասական ազդեցությունը: Լրատվական նյութի ամբողջական վերարտադրումը կարող է իրականացվել միայն հեղինակի (հեղինակային իրավունքի իրավատիրոջ) համաձայնության դեպքում: Լրատվական նյութի ամբողջական վերարտադրման կարգն ու պայմանները սահմանվում են կողմերի միջև կնքված պայմանագրով:

2. Տպագիր լրատվական միջոցներում, էլեկտրոնային կայքերում այլ տպագիր լրատվական միջոցների, էլեկտրոնային կայքերի լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս պետք է հղում կատարել լրատվական նյութի սկզբնաղբյուրին: Էլեկտրոնային կայքում տպագիր լրատվական միջոցների կայքերի լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս քաղվածքի վերնագրում տպագիր լրատվական միջոցի անվանման նշումը պարտադիր է, եթե քաղվածքի նպատակը միայն սկզբնաղբյուր լրատվական նյութի վերարտադրությունն է: Էլեկտրոնային կայքերի լրատվական նյութերից քաղվածքներ վերարտադրելիս էլեկտրոնային կայքի ակտիվ հղումի տեղադրումը, ինչպես նաև քաղվածքի վերնագրում էլեկտրոնային կայքի տիրույթային անվանման (դոմեյնի) նշելը պարտադիր են, եթե քաղվածքի նպատակը միայն սկզբնաղբյուր լրատվական նյութի վերարտադրությունն է:»:

Օրենքի ընդունումը բավական հստակություն մտցրեց լրատվական դաշտում, և դրա ընդունումից հետո շատ քիչ դեպքերում է, որ չի պահպանվում պատշաճ հղումը: Սակայն դեռևս խիստ արդիական է մի հարց, այն է՝ նպատակն արդարացնող ծավալի հիմնախնդիրը: Նպատակն արդարացնող ծավալ եզրույթը ամրագրված է Բեռնի կոնվենցիայում, որի 10-րդ հոդվածը սահմանում է, որ թույլատրվում է մեջբերումներ (քաղվածքներ) երկից, որն արդեն օրինաչափ կերպով մատչելի է դարձել

www.journal.lawinsstitute.am

հանրությանը, բարի սովորությունները պահպանելու պայմանով և նպատակն արդարացնող ծավալով՝ ներառյալ թերթերի ու ամսագրերի հոդվածներից մեջբերումներ՝ մամուլի տեսության ձևով: Հարկ է նշել, որ վերարտադրության նպատակն արդարացնող ծավալի որոշումը ամենաբարդ և վիճահարույց խնդիրներից է և կոնկրետ յուրաքանչյուր դեպքի համար պետք է ենթարկվի առանձին վերլուծության և գնահատման: Հնարավոր չէ տալ մեկ ընդհանուր այնպիսի բանաձև բոլոր դեպքերի համար, որը թույլ կտա պարզել, թե արդյոք մեջբերումը իրականացվել է նպատակն արդարացնող ծավալով, թե ոչ: Ամբողջ աշխարհում այս հարցի կապակցությամբ չկա միատեսակ մոտեցում, և այն դատարանների կողմից տարբեր մեկնաբանությունների է արժանանում:

Մի շարք երկներում ստեղծագործությունից հատվածը ենթակա է իրավական պաշտպանության, եթե այն ստեղծագործության էական մասն է կազմում: ԵՄ դատական պրակտիկան ելնում է այն հանգամանքից, որ էական մասը որոշելու համար պետք է հիմնվել ոչ թե քանակի, այլ որակի վրա: Այսպես, ԵՄ դատարանը *Infopaq International A/S v Danske Dagblades Forening*[2009] ECDR 16¹⁰ որոշմամբ նշել է, որ թույլատրելի է ստեղծագործության այն հատվածի պաշտպանությունը, որը արտահայտում է հեղինակի ստեղծագործական աշխատանքը, եթե նույնիսկ այդ հատվածը կազմված է 11 բառից:

Գոյություն ունի մի հետաքրքիր բանաձև, որը արտահայտված է բավական հին դատական որոշումներից մեկում՝ կապված այն հանգամանքի հետ, թե արդյոք այլ հեղինակի ստեղծագործությունից հատվածը ենթակա է իրավական պաշտպանության. «Այն ամենը, ինչ արժանի է պատճենման, արժանի է նաև հեղինակային իրավունքով պաշտպանության:»¹¹:

ԱՄՆ-ի Գերագույն դատարանը իր մի շարք որոշումներում նշել է, որ անթույլատրելի է այն հատվածների վերարտադրությունը, որոնք կազմում են «ստեղծագործության սիրտը»(Harper & Row Publishers, Inc. V. Nation Enters., 1985): Այս կապակցությամբ ամերիկյան տեսաբանները նշում են՝ ստեղծագործության սիրտը կազմում է ստեղծագործության այն հատվածը, որը կարող է փոխարինել բնօրինակ հոդվածին: Վերնագիրը և համառոտ նկարագրությունը չեն փոխարինում հոդվածին, այլ միայն պարունակում են ստեղծագործության հիմնական գաղափարը: Որոշ դեպքերում

իրավական պահպանության է արժանանում նույնիսկ ստեղծագործության վերնագիրը¹²:

Եթե տարբեր երկրներում դատական պրակտիկան կարողանում է բանաձևել նպատակն արդարացնող ծավալը, ապա այս առնչությամբ հաստատանյան դատական պրակտիկան դեռևս լռում է: Օրենքի ընդունումից հետո է քննվել է ընդամենը երկու գործ՝ «Հետաքննող լրագրողներ ՀԿ-ն ընդդեմ Աճի պրոդաքշն ՍՊԸ-ի»¹³ և «Հետաքննող լրագրողներ ՀԿ-ն ընդդեմ առաջին լրատվական ՍՊԸ-ի»¹⁴: Առաջին գործը ավարտվել է կողմերի միջև հաշտության համաձայնության կնքմամբ, ուստի դատարանի կողմից անդրադարձ չի կատարվել նպատակն արդարացնող ծավալի հիմնախնդրին: Երկրորդ գործի շրջանակներում նույնպես անդրադարձ չի կատարվել նպատակն արդարացնող ծավալին, քանի որ հայցվորի գրեթե բոլոր հոդվածները ամբողջությամբ վերարտադրվել էին պատասխանողի կողմից, ուստի դատարանի առջև չէր բարձրացվել այն հարցը, թե արդյոք վերարտադրությունը կատարվել է նպատակն արդարացնող ծավալով, թե ոչ: Այսպիսով, կարելի է մատնանշել, որ մեր դատական պրակտիկան դեռևս չի անդրադարձել նպատակն արդարացնող ծավալի հիմնախնդրին: Գործնականում, երբ խոսվում է նպատակն արդարացնող ծավալով լրատվական նյութի վերարտադրման մասին, շատ հաճախ նշվում է, որ անհրաժեշտ է սահմանել նյութի որոշակի քանակ, ծավալ, որից ավելի վերարտադրումը կհանգեցնի հեղինակային իրավունքների խախտման: Տեսականորեն չբացառելով նշված հնարավորությունը՝ լրատվական նյութի վերարտադրման քանակային սահմանափակման գերազանցումը գնահատելիս, կարծում ենք, պետք է նաև անպայմանորեն հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

1.Ամբողջ լրատվական նյութի հետ համեմատության մեջ օգտագործվող մասի ծավալը և կարևորությունը, այսինքն՝ պետք է հաշվի առնվի վերարտադրված նյութի քանակական և որակական (բովանդակային) հատկանիշները ամբողջական նյութի հետ հարաբերակցության մեջ: Վերարտադրությունը չպետք է բացահայտի լրատվական նյութի էական մասը՝ «լրատվական նյութի սիրտը». չի կարող վերարտադրվել այն հատվածը, որը ունակ է փոխարինել բնօրինակ հոդվածին: Այսինքն՝ վերարտադրությանը ծանոթանալուց հետո ընթերցողը դեռևս պետք է ցանկություն ունենա ընթերցել նաև սկզբնաղբյուր լրատվական կայքի նյութը: Այս առումով բավական հետաքրքրական է

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

«Harper & Row v. Nation Enterprises» գործը: Նշված գործում դատարանը պաշտպանեց «Harper & Row» հրատարակչության դիրքորոշումը, որը պետք է հրատարակեր ԱՄՆ նախկին նախագահ Դ. Ֆորդի մեմուարները: Դատարանը իր դիրքորոշումը, ի թիվս այլ հանգամանքների, հիմնավորեց այն հանգամանքով, որ ամսագրի կողմից մեջբերված 300 բառերը «մզվածք» էին, որոնք արտահայտում էին ամբողջ գրքի էությունը, ինչն էլ էականորեն ազդել էր գրքի հետագա վաճառքի ծավալների վրա¹⁵:

2. Պետք է ուշադրություն դարձվի օգտագործման նպատակի և բնույթի վրա: Օգտագործումը պետք է հետապնդի առավելապես հանրությանը տեղեկություն տալու նպատակ: Օգտագործման բնույթը ուսումնասիրելիս պետք է անդրադառնալ նաև մեկ այլ կարևոր հանգամանքի. արդյոք վերարտադրվող նյութը մշակման ենթարկվել է, թե ոչ, արդյոք վերարտադրող լրատվամիջոցը կատարել իր մեկնաբանությունները, թե ոչ: Այս կապակցությամբ հատկանշական է «Copiepresse vs Google News» գործը, որով դատարանը, ի թիվս այլ հան-

գամանքների, նշել է, որ այլ լրատվամիջոցի հոդվածի վերարտադրումը առանց սեփական մեկնաբանությունների ամենայն հավանականությամբ, չի մտնում այն գործողությունների մեջ, որոնք կարելի է իրականացնել առանց հեղինակի համաձայնության¹⁶:

3. Վերարտադրության նպատակն արդարացնող ծավալը գնահատելիս կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե ինչ ազդեցություն է ունեցել նյութի վերարտադրումը սկզբնական լրատվամիջոցների ընթերցողների քանակի, կայքի այցելության վրա:

Այսպիսով, կարծում ենք, որ յուրաքանչյուր դեպքում վերարտադրման իրավաչափությունը գնահատելիս պետք է վերլուծության ենթարկել վերոգրյալ բոլոր պայմանները, վերարտադրման միայն բոլոր պայմանների պահպանության դեպքում կարելի է իրավաչափ համարել լրատվական նյութի վերարտադրումը:

¹ Տե՛ս <http://lexdigital.ru/2012/054/> (վերջին այցելություն 10.01.2015թվական)
² Տե՛ս <http://lexdigital.ru/2012/054/> (վերջին այցելություն 10.01.2015թվական)
³ Տե՛ս <http://lexdigital.ru/2012/054/> (վերջին այցելություն 10.01.2015թվական)
⁴ Տե՛ս Լրատվական ազրեգատորը ծառայություն է, որը տարբեր լրատվական կայքերի նորությունները հավաքում է մեկ վայրում: Լրատվական ազրեգատորներ են, օրինակ, «Google News»-ը, «Yahoo News»-ը և այլն:
⁵ Տե՛ս <http://webmail.strateger.net/story/zagnat-v-google> (վերջին այցելություն 10.01.2015թ)
⁶ Տե՛ս <https://xakep.ru/2014/10/29/eu-google-tax/> (վերջին այցելություն 10.01.2015թ)
⁷ Տե՛ս <http://mygazeta.com/%D0%BD%D0%BE%D0%B2%D0%BE%D1%81%D1%82%D0%B8/%D0%BD%D0%B0%D0%BB%D0%BE%D0%B3-%D0%BD%D0%B0-google-%D0%B3%D0%B5%D1%80%D0%BC%D0%B0%D0%BD%D0%B8%D1%8F-%D0%BE%D0%B1%D1%8F%D0%B6%D0%B5%D1%82-%D0%BF%D0%BE%D0%B8%D1%81%D0%BA%D0%BE%D0%B2.html> (վերջին այցելություն 10.01.2015թ)
⁸ Տե՛ս <http://www.copyright.gov/fls/fl102.html> (վերջին այցելություն 10.01.2015թ)
⁹ Տե՛ս http://en.wikipedia.org/wiki/Fair_dealing (վերջին այցելություն 10.01.2015թ)
¹⁰ Տե՛ս http://en.wikipedia.org/wiki/Infopaq_I (վերջին այցելություն 10.01.2015թ)
¹¹ Տե՛ս <http://lexdigital.ru/2012/054/> (վերջին այցելություն 10.01.2015թվական)
¹² Տե՛ս <http://lexdigital.ru/2012/054/> (վերջին այցելություն 10.01.2015թվական)
¹³ Տե՛ս http://www.datalex.am/dl_case_search.php? (վերջին այցելություն 10.01.2015թվական)
¹⁴ Տե՛ս http://www.datalex.am/dl_case_search.php? (վերջին այցելություն 10.01.2015թվական)
¹⁵ Տե՛ս <http://rbis.su/article.php?article=633> (վերջին այցելություն 10.01.2015թվական)
¹⁶ Տե՛ս <http://lexdigital.ru/2012/054/> (վերջին այցելություն 10.01.2015թվական)

Օգտագործված գրականության ցանկ

1. Բարսեղյան Ս.Գ., Հովհաննիսյան Ա.Ա. Մտավոր սեփականության իրավունք ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ, «Ստոդիկ» հրատ., Երևան, 2012:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երրորդ մաս, Տ.Չ. Բարսեղյանի, Գ.Հ. Ղարախանյանի խմբագրությամբ, ԵՊՀ հրատ., Երևան, 2011:
3. Гришасев С.П. Интеллектуальная собственность, Система Гарант, 2009.
4. Мэгтс П.Б., Сергеев А.П. Интеллектуальная собственность, Москва, 2000:
5. Сергеев А.П. Право интеллектуальной собственности в Российской Федерации, учебник, Москва, 2003.
6. Судариков С. А. Право интеллектуальной собственности: учеб. М.,2008.

Ինտերնետային կայքեր

1. <http://www.arlis.am/>
2. <http://www.copyright.gov>
3. www.datalex.am
4. <http://lexdigital.ru>
5. <http://rbis.su>
6. <http://webmail.strateger.net>
7. <https://xakep.ru>

Արփине Օգաննեսյան

Депутат Национального собрания РА,
кандидат юридических наук, доцент

Մարիամ Այվազյան

Аспирант кафедры гражданского права
юридического факультета ЕГУ

РЕЗЮМЕ

Защита авторского права в средствах массовой информации

В статье проанализированы проблемы защиты авторского права в СМИ. Несмотря на то, что 2014 году были приняты поправки в закон “Об авторском праве и смежных правах”, которые впервые установили правила использования новостного контента, тем не менее, существуют еще ряд нерешенных вопросов, касающихся свободного использования произведений и объема, оправданной поставленной целью. По этой причине в статье были исследованы правила свободного использования произведений, была представлена международная практика и разные точки зрения об объеме, оправданном поставленной целью. В качестве решения в статье предлагаются критерии, при соблюдении которых использования произведений считается осуществленной в объеме, оправданном поставленной целью.

Ключевые слова - авторское право, СМИ, свободное использование, объем, оправданный поставленной целью.

Arpine Hovhannisyan

Deputy of the National Assembly of RA,
candidate of Law, associate Professor

Mariam Ayvazyan

PHD student of Faculty of Law YSU

SUMMARY

Copyright protection in Mass Media

The article analyzes the problem of copyright protection in the media. Despite the fact that in 2014 the amendments introducing new rules on using news content were made to the Law “On Copyright and Related Rights”, there are still a number of unresolved issues relating to the free use of the content and the extent justified by the purpose. For this reason, the article studies the rules of the free use, presents international practice and different points of view about the extent justified by the purpose. As a solution the author suggests criteria based on which the decision on the extent justified by the purpose should be made.

Keywords - copyright, Mass Media, free use, the extent justified by the purpose.